ԱՆԳԵԼԻՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի պետ, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ԼՂՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ցանկացած երկրում ժողովրդավարության կարևոր ինստիտուտներից մեկն է: Այս ինստիտուտի գոյությունը թեև ԼՂՀ-ում երկար տարիների փորձ չունի, սակայն այն դարձել է քաղաքացիների իրավունքների պաշտպանության կարևոր կենտրոն: Ոչ պակաս նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ քաղաքացու իրավունքների պաշտպանությամբ զբաղվում է Ազգային ժողովի կողմից ընտրված անձը, ինչը զգալիորեն մեծացնում է մարդու իրավունքների պաշտպանի իրավունակությունը և հեղինակությունը: Նկատենք նաև, որ այս ատյանում խնդիրների լուծումը ավելի ուրվագծված է և կարճ ժամանակահատվածում է կատարվում:

Հատկապես կարևոր է այն, որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի առաջացման և դրա կայացման հիմնախնդիրները յուրահատուկ առանձնահատկություն են ձեռք բերում միջազգային հանրույթի կողմից չճանաչված այնպիսի հանրապետությունում, ինչպիսին ԼՂՀ-ն է, որը, չնայած հայտնի իր բոլոր դժվարություններին, ունի ժողովրդավարական պետության բոլոր հատկանիշներն ու ատրիբուտները, այդ թվում նաև մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Հիմնաբառեր *- ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպան, ԼՂՀ Սահմանադրություն, ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ, Մարդու իրավունքների պաշտպանի զեկույց:*

Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ իր լիազորությունների սահմաններում գործող Մարդու իրավունքների պաշտպանն անկախ է պետական իշխանության մարմիններից ու ենթակա չէ նրանց:

Մարդու իրավունքների պաշտպանը չպետք է զբաղվի որևէ քաղաքական գործունեությամբ, չի կարող լինել քաղաքական կուսակցության կամ քաղաքական նպատակներ հետապնդող այլ հասարակական միավորման անդամ: Օմբուդսմանների Միջազգային և Եվրոպական ինստիտուտները, ինչպես նաև բոլոր այլ միջազգային կազմակերպությունները քաղաքականությամբ չզբաղվելը համարում են պետական իրավապաշտպան ինստիտուտների անկախ գործունեության կարևորագույն գրավականը:

Վերը նշված սկզբունքներն ամրագրված են նաև ԼՂՀ Սահմանադրությամբ ու «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքով, և դրանց վրա է հիմնված Պաշտպանի գործունեության կազմակերպումն ու գործնականում դրանց իրականացումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է.

«1. Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին: Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

2.Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

3. Պաշտպանի որոշումները վարչական ակտ չեն հանդիսանում և բողոքարկման ենթակա չեն»:

Ուսումնասիրելով Պաշտպանի լիազորություններն ու գործունեության հիմնական ուղղություններ-

ը՝ հատկապես կարևորում ենք *քաղաքացիներին խորհրդատվություն տրամադրելու Պաշտպանի գործառույթը*: Տարբերվում է խորհրդատվության երկու տեսակ՝ բանավոր և Պաշտպանի՝ օրենքով սահմանված համապատասխան գրավոր որոշումներով հիմնավորված:

Երկու դեպքերում էլ դիմողին պարզաբանվում են իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները (եթե համապատասխան գործողությունների կատարումը դուրս է Պաշտպանի՝ օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակից, օրինակ՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ տրամադրվող խորհրդատվությունը) կամ հիմնավորվում է հանրային մարմնի գործողությունների օրինականությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքները օրենսդրությամբ սահմանված կարգով ամեն տարի ամփոփվում են Պաշտպանի տարեկան զեկույցում: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններին է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

Պաշտպանի տարեկան զեկույցներում ընդհանուր գնահատական է տրվում հաշվետու տարվա դրությամբ մարդու իրավունքների պաշտպանվածության վիճակին և դրա հետ կապված հիմնախնդիրներին, ներկայացվում են մարդու իրավունքների խախտումների մասին տեղեկություններ և դրանց պատճառների վերլուծությունը, Պաշտպանի կողմից կատարված աշխատանքն ըստ իր գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց արձագանքը նրա կողմից արված առաջարկներին:

Օմբուդսմանի տարեկան զեկույցը նախապատրաստվում է իրավիճակի ուսումնասիրության հիման վրա, որն իրականացվում է՝ ամփոփելով քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումները և այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել Պաշտպանի և նրա աշխատակազմի կողմից բնակչության ընդունելության, զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատազրկման վայրեր կատարված այցելությունների ընթացքում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու ոչ պետական կազմակերպություններից ստացված և ՁԼՄ-ներում տպագրված նյութերից, ինչպես նաև ԼՂՀ-ում գործող օրենսդրության վերլուծությունը:

ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ամենամյա զեկույցների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, բացի վերը նշվածից, Պաշտպանն ու աշխատակազմի մասնագետները քաղաքացիներին խորհրդատվություն են տրամադրում նաև հեռախոսով, շրջկենտրոններում և այլ բնակավայրերում ընդունելության, ինչպես նաև Շուշիի քրեակատարողական հիմնարկում, ԼՂՀ ոստիկանության և ռազմական ոստիկանության ստորաբաժանումների ԺՊՄ-ում, զինվորական մասերի կալանատներում պահվող անձանց հետ հանդիպումների ընթացքում: Խորհրդատվության այս տեսակն իրականացվել է առավելապես բանավոր եղանակով և իրենից ներկայացրել է իրավաբանական համակողմանի խորհրդատվության տրամադրում՝ կապված հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առաջացող իրավահարաբերությունների հետ:

Զգալի թիվ են կազմում հիմականում դիմումատուների՝ սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող խորհրդատվությունները, որոնց շարքում գերակշռում են նպաստների, կենսաթոշակային ոլորտի օրենսդրության, փախստականների բնակարանային հարցերի, հաշմանդամների իրավունքների, ԽՍՀՄ խնայբանկերում քաղաքացիների կողմից ներդրված ավանդների փոխհատուցման գործընթացին, սեփականության իրավունքի խախտմանը վերաբերող դիմումներով տրված պարզաբանումները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուշադրության արժանի խնդիր է հանդիսանում նաև քաղաքացիների՝ ԼՂՀ Սահմանադրությամբ երաշխավորված բավարար կենսապայմանների իրավունքը, որտեղ առանձնահատուկ նշանակություն է տրվում բնակարանային հիմնախնդիրներին:

Առանձնակի կարևորություն ունեն նաև արցախյան պատերազմի ժամանակ ադրբեջանական բանակի կողմից կատարած հրետակոծությունների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիներին բնակարանով ապահովելու, ինչպես նաև ավերված

www.journal.lawinstitute.am

բնակարանների վերանորոգման խնդիրների լուծումը: Այս կապակցությամբ օրենքով սահմանված կարգով Պաշտպանի կողմից կայացված որոշումներով բազմաթիվ դիմումատուների ներկայացվել են ոլորտի իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Քիչ չեն նաև այնպիսի դիմումները, որոնցում ներկայացված պահանջները կրում են բացառապես քաղաքացիաիրավական բնույթ, մինչդեռ դիմումատուները կտրականապես հրաժարվում են խնդրի լուծման դատական եղանակից և դիմում են այնպիսի պետական մարմինների, որոնք օժտված չեն նմանատիպ հարցերի լուծման իրավասությամբ:

Երևույթի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դատարան չդիմելու պատճառն այն անվստահության մթնոլորտն է, որը ձևավորվել է քաղաքացիների մի մասի մոտ տարիների ընթացքում՝ առանձին դատավորների կողմից ոչ հեռու անցյալում ակնհայտ անօրինական և ոչ արդարացի վճիռներ ու դատավճիռներ կայացնելու, դատավորների՝ օրենքով սահմանված անկախությունն իրականում չապահովելու, դատական համակարգի անկատարության (հատկապես Գերագույն դատարանի կողմից վերաքննության և վճռաբեկության կարգով արդարադատություն իրականացնելը), գործի քննության անհիմն ձգձգումների (հատկապես քաղաքացիական) և դիմումների քննության անհիմն մերժման հետևանքով:

Նման պայմաններում Պաշտպանն իր խնդիրներից է համարում նաև դատարանների դերի բարձրացմանն ու երկրում արդյունավետ և որակյալ արդարադատության իրականացմանն աջակցելը:

ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից կարևորում ենք հատկապես բնակչության հետ Պաշտպանի անմիջական շփումը, որի ապահովման և դիմումներին հնարավորինս արագ ու արդյունավետ արձագանքելու նպատակով պարբերաբար Օմբուդսմանի հատուկ ուշադրությանն են արժանանում քաղաքացիների անձնական ընդունելությունների կազմակերպումն ու անցկացումը, որն իրականացվում է ինչպես Պաշտպանի աշխատակազմում, այնպես էլ տեղերում:

Այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության փորձը ցույց է տալիս, որ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետության կարևորագույն երաշխիք է արագ արձագանքումը: Արագ արձագանքումը՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, դրանց շուտափույթ վերացմանը և իրավունքների վերականգնմանն ուղղված, հրատապ ու անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն է: Այն նպատակ է հետապնդում վեր հանել ու կանխել հանրային մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումները կամ այդպիսի խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները:

Ցավոք, այս կարևորագույն ծառայությունը ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դեռևս ձևավորված չէ, որը հիմնականում պայմանավորված է համապատասխան հաստիքների, ինչպես նաև տրանսպորտային միջոցի բացակայությամբ: Չնայած վերոնշյալ խմբի բացակայությանը՝ Պաշտպանն իր ծառայողական ավտոմեքենայի և աշխատակիցների միջոցով փորձում է հնարավորինս ապահովել արագ արձագանքում պահանջող հարցերի լուծումը, սակայն վերոհիշյալ զուտ օբյեկտիվ պատճառներով արձագանքման պահանջվող օպերատիվությունն ապահովվում է ոչ բոլոր ստացված ահազանգերի դեպքում:

Այլ երկրների Օմբուդսմանների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգային իրավապաշտպան ինստիտուտների գործունեության արդյունավետության գնահատման համար ընդհանրական չափանիշներ չկան: Սակայն անվիճելի է, որ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը վկայում է նաև այդ իրավունքների պաշտպանությանը կոչված բոլոր մարմինների, այդ թվում՝ Պաշտպանի գործունեության արդյունավետության մասին:

Պաշտպանի գործունեության արդյունավետության մասին հիմնականում վկայում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Պաշտպանի առաջարկությունների ընդունումն ու իրագործումը և նույն հարցով քաղաքացիների կրկնակի դիմումների բացակայությունը:

Պաշտպանի գործունեության թեկուզև ոչ լիարժեք, բայցևայնպես շոշափելի արդյունքներ են հանդիսանում հենց մարդու և քաղաքացու իրավունքների վերականգնման փաստերը:

ԼՂՀ շրջաններում դեռևս բացակայում են այս կառույցի տարածքային ստորաբաժանումներն ու առանձին ներկայացուցիչների առկայությունը և ընդունելության մատչելիության ու Պաշտպանին անմիջականորեն դիմելու նկատառումներից ելնելով՝ պարբերաբար բնակչության ընդունելություններ են կազմակերպվում Հանրապետության

շրջաններում:

Ինստիտուտի գործունեության առաջին իսկ օրերից էլ բնակչության շրջանում ակտիվություն էր նկատվում: Բնակիչների դիմումները տարաբնույթ էին, նույնիսկ բարձրացվում էին հարցեր, որոնց լուծումը դուրս էր մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակից: Դիմումներ ստացվում էին ոչ միայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, այլև ոչ պետական մարմինների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց գործողությունների դեմ:

Մի խնդիր ևս, որին բախվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, այն է, որ մարդիկ հաճախ խուսափում են գրավոր դիմում ներկայացնելուց՝ գերադասելով բանավոր բողոքները: Պատճառը ներքին վախն է. բողոքարկուները համոզված են, որ գանգատը բացասաբար կանդրադառնա իրենց վրա:

Ամփոփելով նշենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծումը, գործունեության բնականոն ընթացքը շատ կարևոր ձեռքբերում է միջազգային հանրույթի կողմից չճանաչված այնպիսի հանրապետությունում, ինչպիսին ԼՂՀ-ն է, որը, չնայած հայտնի իր բոլոր դժվարություններին, ունի ժողովրդավարական պետության բոլոր հատկանիշներն ու ատրիբուտները, այդ թվում նաև՝ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ԼՂՀ Սահմանադրություն
3. ՀՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»
4. ԼՂՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»
5. ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներ
6. Rowat D. C. The Ombudsman plan, Essays on the Woldwide Spread of an Idea. Toronto, 1973.
7. Князькин С.А. Институт Уполномоченного по правам человека в международном и внутригосударственном механизме защиты прав человека: 2000.

Ангелина Аванесян
Начальник отдела исков и правовых актов юридического
управления аппарата управления по управлению государственным
имуществом при правительстве Республики Армения,
соискатель кафедры конституционного и муниципального права института
политологии и права Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Полномочия, обязанности и основные направления деятельности Защитника прав человека НКР

Институт Защитника прав человека НКР действует в республике с мая 2008 года. Согласно Конституции НКР, защитник прав человека - независимое должностное лицо, которое осуществляет защиту нарушенных государственными органами, органами местного самоуправления и должностными лицами прав и свобод человека и гражданина.

Защитник независим и при осуществлении своих полномочий подчиняется только Конституции и законам Республики НКР, а также общепризнанным принципам и нормам международного права и не подчиняется какому-либо государственному органу, или органу местного самоуправления, или должностному лицу.

В течение первого квартала каждого года Защитник представляет Президенту Республики НКР в органы законодательной, исполнительной и судебной власти доклад о своей деятельности за предыдущий год и о нарушении прав и фундаментальных свобод человека в стране, а в течение весенней сессии Национального Собрания представляет его на заседании Национального Собрания. Доклад также представляется средствам массовой информации и соответствующим общественным организациям.

По отдельным вопросам, имеющим общественный резонанс, или при грубом нарушении прав человека, а также неустранении нарушений в массовом порядке, Защитник может выступить с внеочередным публичным докладом.

***Ключевые слова**: Права человека, Защитник прав человека НКР, Конституция НКР, Омбудсмен, Институт Защитника прав человека НКР, годовой доклад защитника.*

Angelina Avanesyan
Department of State Property Management by the Government
Of the RA as the Head of Division in Juridicial Department,
Post-graduate student of the
Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The Powers, Duties and the main activities of Human Rights Defender on the Republic of Nagorno Karabakh

The Human Rights Defender is an independent and unaltered official, who protects the human rights and fundamental freedoms violated by the state and local self-governing bodies or their officials. Defender is favouring the improvement of Nagorno Karabakh Republic's legislative concerning person's and citizen's rights, its defending forms and methods and its conforming on international law's universal recognized principles and norms, development of international cooperation in the sphere of human rights and the human rights and freedom issues legal upbringing.

The Defender shall be independent in executing his/her powers and shall be guided only by the Constitution and the Laws of the Republic of Nagorno Karabakh, as well as recognized norms and principles of International Law. The Defender shall not be subordinated to any state or local self-governing body or official. The Defender shall not be obligated to provide clarifications, not even as a witness, about the nature of a complaint or a document in his/her possession. He/she shall not make them accessible for familiarization with the exception of the cases and procedure not stipulated by the Law.

Each year, during the first quarter of the year, the Defender shall deliver a report on his/her activities and on the human rights situation in the previous year to the President of the Republic of Armenia and the representatives of legislative, executive and judicial authorities. The reports shall be presented to the National Assembly during the first sitting of the National Assembly's spring session. The Defender also presents his/her report to the mass media and relevant NGO-s.

***Keywords**: Human Rights Defender of NKR, Constitution of NKR, NKR Ombudsman Institute, NKR "Law on Human Rights", annual report of Human Right Defender.*